«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը հայ գրականության դասավանդման ընթացքում
ԱՌԱՐԿԱ	**Հայ գրականություն**
ՀԵՂԻՆԱԿ	Մարիամ Գասպարյան
ՄԱՐԶ	Շիրակի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Մարալիկի թիվ 2 միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»

1.1.Մարդկային արժանապատվությունը և մարդու իրավունքի արժեքները Խորենացու «Հայոց պատմության» մեջ.....6

1. 2.Մշակույթի բազմազանություն արժեքի ուսուցումը ըստ Խորենացու 7

ԳԼՈՒԽ 2. «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՈՒԺԸ և ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ..... 9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականության հիմնավորում: Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը կրթական համակարգի առջև ծառացած կարևոր խնդիրներից է բոլոր ժամանակներում: Փոխվում են համակարգերը, ժամանակները, հասարակությունը, մարտահրավերները, բայց արժեհամակարգ ստեղծելու անհրաժեշտությունը մշտապես արդիական է մնում:

Հասարակություններն ու նրանց պատկերացումներն արագորեն ձևափոխվում են: Հատկապես տեխնոլոգիական զարգացմանը զուգահեռ 21-րդ դարում հանրային տարբեր շերտերում փոփոխությունները թռիչքաձև են տեղի ունենում. փոփոխվում են կյանքի, մարդկային հարաբերությունների և արժեքների մասին նոր սերնդի պատկերացումներն ու ընկալումները, բախումները դառնում են ավելի հավանական:

Տնտեսական և քաղաքական ճգնաժամի ժամանակ է՛լ ավելի ակնհայտ է դառնում, որ քաղաքացիները պետք է ի վիճակի և պատրաստակամ լինեն ակտիվորեն ներգրավվելու իրենց արժեքների ու սկզբունքների պաշտպանության գործին: Հանգամանքները փոխվում են, և անհրաժեշտ է, որ մարդիկ զարգացնեն առկա կարողունակություններն ու ձեռք բերեն նորերը՝ արձագանքելով իրենց ապրած միջավայրում տեղի ունեցող փոփոխություններին: Հասարակության սոցիալական, տարիքային և աշխարհագրական տարբեր շերտերի ու խմբերի միջև խզվածքի չհանգելու համար այսօր, առավել քան երբևէ, կարևոր ու առարկայական է նոր սերնդի շրջանում արժեքների բացահայտման, կարևորման, ձևավորման ու ամրապնդման առաքելությունը:

Ինչպիսի՞ հասարակություն են ստեղծելու մեր երեխաները վաղը: Այս հարցի պատասխանի կարևոր մասն ընկած է այն կրթության մեջ, որ նրանց տալիս ենք այսօր: Կրթությունն առանցքային դեր ունի ապագայի ձևավորման գործում և ուրվագծում է այն աշխարհընկալումն ու աշխարհակարգը, որն ուզում ենք ստանալ հետագա սերունդների համար: Կրթական տարբեր օղակները պետք է կրթեն ակտիվ, հաղորդակից և պատասխանատու անհատներ, հակառակ դեպքում բազմամշակույթ և արագ զարգացող հասարակություններում նրանք կձախողվեն:

Ուսումնական հաստատությունները հստակ գործառույթ ունեն այս չընդհատվող ու շարունակական շղթայում: Երեխաների մեծ մասը հանրային տիրույթի հետ առաջին շփումն ու առնչություն ունենում է դպրոցում, հետևաբար սա այն օղակն է, որտեղից պետք է մեկնարկի ժողովրդավարական արժեքների սերմանումը: Իհարկե սա պետք է լինի շարունակական կրթության մյուս մակարդակներում ևս՝ սովորողների տարիքին ու հասունությանը համապատասխան եղանակներով:

Ավ. Իսահակյանն ասում է. «Ես Ձեզ ասում եմ՝ կգա ոգու սով...» [1, էջ 168]: Մեծ բանաստեղծի հայտնի այս նախադասությունը հենց արժեհամակարգի փոփոխության, խաթարման եւ կորստի ահազանգն է, տագնապ, որ այն, ինչ ոգեղեն է ու արժեքավոր, կդադարի լինել այդպիսին: Այսպիսով՝ արժեքային համակարգի ձևավորումը միշտ էլ մնում է արդիական: Առանց արժեքների մարդը դադարում է մարդ լինել:

Հետազոտության առարկան սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի վերլուծությունն է հայ գրականության շնորհիվ :

Հետազոտության նպատակը: Ի՞նչ է արժեքը: *Արժեքներն ընդհանուր համոզմունքներ են, որ անհատն ունի այն ցանկալի նպատակների վերաբերյալ, որոնց պետք է ձգտել կյանքում:* Հենց դրանց ձևավորման նպատակն էլ պետք է հետապնդի առարկայի ուսուցիչը: Հետազոտության նպատակն է տեսականորեն հիմնավորել գրականության առարկայի ներուժը սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման տեսանկյունից:

Աշխատանքն ունի իր հստակ նպատակը, հասկանալ, թե ինչպես կարելի է հասնել վերոնշյալ արժեքների ձեւավորմանը.

- Զարգացնել գեղեցիկի ընկալումը
- Կատարելագործել գիտելիքները մարդու, մարդկայինի, հայրենասիրության, արդարության, սեփական մշակույթի, ավանդույթների վերաբերյալ:
- Բարձրացնել պատասխանատվությունը սեփական անձի ու արաքների, շրջապատող աշխարհի, մարդկային հարաբերությունների հանդեպ:
- Խթանել նպատակասլացությունը, գիտելիքների միջոցով աշխարահաճանաչման հասնելը:
- Ձևավորել անձ եւ քաղաքացի, որը կրում և գիտակցում է ազգային և համամարդկային արժեքներ:

Խնդիրները: Գրականություն դասավանդող ուսուցիչն արժեքային համակարգի ձևավորման անհրաժեշտ հզոր զինանոց պետք է ունենա: Պետք է հստակ իմանալ, թե առարկայի դասաժամին ինչպիսի խնդիրներ ենք լուծում մեր նպատակին հասնելու համար: Սովորողների հետ միասին պետք է մանրամասն ուսումնասիրել տվյալ ստեղծագործությունը, հեղինակի ապրած ժամանակաշրջանը, այն իրականությունը, որում ապրել և ստեղծագործել է գրողը: Հատ առ հատ պետք է անդրադառնալ և հասկանալ, թե ինչպես է պետք իրականացնել հետևյալ կետերը.

- Գրական երկի ստեղծման շարժառիթները, գրողին մղող ազգային, հասարակական, քաղաքական կամ անձնական ազդակների բացահայտում:
- Վերլուծել գրական հերոսների արարքները, վարքագիծը, նրանց այս կամ այն քայլին մղող դրդապատճառները:
- Գնահատել գրական հերոսների, կերպարների արարաքները:
- Անցկացնել քննարկումներ, համեմատական վերլուծություններ, բանավեճեր՝ գրական երկի կոնֆլիկտային իրավիճակների լուծման սեփական տարբերակներ ներկայացնելով:
- Կազմակերպել դերային խաղեր:
- Սահմանել գրողի գեղագիտական մղումները:
- Անցկացնել ներառարկայական և միջառարկայական կապեր:

Այս և նմանատիպ այլ խնդիրներ լուծելով՝ ուսուցիչը հասնում է իր առջև դրված գլխավոր նպատակին՝ ձևավորել արժեքների ամուր համակարգ. չէ որ արժեքներն առանցքային նշանակություն ունեն կարողունակությունների կոնցեպտուալացման համատեքստում, ինչը թույլ է տալիս լինել ժողովրդավարության մշակույթի մասնակից:

Առաջադրված խնդիրների լուծման նպատակով կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները**՝ *դիտում, զրույց, հարցում, փորձարարական ուսուցում*:

ԳԼՈՒԽ 1. 1 ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Ժողովրդավարության կարևորագույն արժեքներից է *մարդկային արժանապատվությունը և մարդու իրավունքը*: Խորենացու «Հայոց պատմությունն» ուսումնասիրելիս սովորողների հետ միասին բացահայտում ենք մեծ հայրենասերի և պատմիչի բերած դասերը մարդկային արժանապատվության և մարդու իրավունքի մասին:

Տիգրանյան և Արտաշիսյան պետականությունն, ըստ Խորենացու, հենվում էր ուժի, աշխատանքի, տնական խաղաղության, ներդաշնակության, ինչպես նաև բանականության վրա: [2, էջ126]: Ահա թե ինչպես է Տիգրանի մասին խոսելով՝ Խորենացին բացահայտում իր պատկերացումներն արդարության, իրավունքի և արժանապատիվ ապրելու մասին. «Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով, չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը»:[3, էջ 47]

Խորենացին խոսում է գեղեցիկ, ներդաշնակ հասարակության, առաջադեմ պետության և մարդկային բանականության գերակայությամբ լցված առողջ մթնոլորտի մասին: Խորենացու երազանքը խիզախության, խոհականության, ուժի, խաղաղության ստեղծման, գիտության առաջադիմության վերաբերյալ ուղեկցել է մարդկային հասարակությանը միշտ: Պատմահոր «Հայոց պատմությունը» ունի դաստիարակչական և հզոր արժեքային ուժ թե՛ ազգային, թե՛ համամարդկային տեսանկյունից:

Սերունդների դաստիարակությունը Խորենացու գործի անկյունաքարն է: Նույն տեսակետն ունեն մեր բոլոր պատմիչները: Նրանք որոնում են ճշմարտությունը, այսինքն՝ բուն գեղեցկությունը, հոգևոր արժեքների կատարելությունը, որն իր մեջ կրում է բազմաթիվ օգուտներ հայրենիքի համար: Հրանտ Թամրազյանը Խորենացու գերագույն նպատակն այսպես է ձևակերպել. «Ճշմարիտ մարդ, ճշմարիտ ոգի, ճշմարիտ հավատ, հայրենիքի ճշմարտացի պատմություն-ահա նրա գերագույն նպատակը»: [2, էջ 130]

ԳԼՈՒԽ 1. 2. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԺԵՔԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑՈՒ

Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ տալիս է նաև այս դասը: Հայրենի մշակույթի զարգացման ուղին նա տեսնում է գիտական, գրական կապերի և առողջ մերձեցումների մեջ: Խոսելով հին ազգերի նշանավոր մարդկանց և մատենագիրների, գիտության ու իմաստալից երգարանների մասին՝ նա գտնում է, որ հայերը պետք է փափագեն նրանց իմաստասիրությանը. «Սրա հետ միասին գուցե նաև փափագենք այն մարդկանց իմաստասիրությանը, որոնք այսպիսի աշխատանք հանձն առան»: [3, էջ 8]

Խորենացին խոսում է իր հայրենիքի մշակույթի զարգացման ուղիների մասին. «Ապրելու համար նա պետք է բարձրանա, բարձրանալու համար՝ պետք է ստեղծի սեփական գիտությունն ու դպրությունը»:[2, էջ 147]

Խորենացու «Հայոց պատմությունը» արժեքների ձևավորման փայլուն դասագիրք է ցանկացած առարկային ուսուցչի համար և ոչ միայն ուսուցչի, այլև քաղաքական, հասարակական, պետական գործչի, արվեստագետի համար: Սա դասագիրք է սերունդների մեջ արժեքային հսկա պաշար կուտակելու համար: Խորենացին կրթում է, ոգևորում է, դաստիարակում է, խրախուսում, առաջնորդում, վերլուծում, փնտրում, գծում է սահմաններ բարոյականության, հայրենասիրության, գեղագիտության, տալիս է արքաների օրինակելի կերպարներ, արժևորում նրանց գործը: «Պատմությունը» նրան ծառայում է մի մեծ նպատակի ընդգծման համար: Հայկական պետության ու ճակատագրի ամուր հիմքի վրա նա ստեղծում է հայացքների մի ներդաշնակ և ամուր համակարգ՝ առաջադրելով վեհի, կատարյալի և գեղեցիկի մասին իր պատկերացումներն ու երազանքները»: [2, էջ115]

Խորենացին սովորեցնում է ճանաչել *սեփական արժանիքները, բայց չմեծամտանալ*: Պրպտել, սովորել, հետազոտել, սիրել դպրությունը, գիտությունը, ճանաչել ազգի փառավոր գործերը, բայց երբեք վեր չդասել մյուսներից սեփական ազգը. ահա իսկական հայրենասիրության և ազգային արժանապատվության դաս: Աշակերտներին մղել սովորելու, նայել առաջ, երբեք չբավարարվել ձեռք բերածով, չգոհանալ ունեցած գիտելիքների պաշարներով, դրանք անընդհատ նորացնել ու սովորել՝ սրանք այն դասերն են, որոնք պատգամում է մեծ պատմահոր թողած գրական ժառանգության *արժեհամակարգը*:

Խորենացին «Պատմությունը» ավարտում է «Ողբ» հատվածով («Ողբք» վասն բառնալոյ թագավորութեանն Հայոց ազգէն Արշակունեաց եւ եպիսկոպոսապետութեանն յազգէ սրբոյն Գրիգորի») :

Խորենացին ողբում է՝ հասկանալով, որ պետականության կորուստը մեծագույն հարված է ազգի գոյությանը և անկախությանը: Սա արդեն իսկ խոսում է նրա՝ մարդու, քաղաքացու, հայրենասերի, պատմագետի, ուսուցչի մասին, որը սերունդներին պատգամ է հղում՝ պահել հայրենիքի անկախությունը, պետականությունը: Խորենացին այս հատվածում դառնագին ողբում է ոչ միայն պետականության կորուստը, այլև բազմաթիվ արժեքների անկումը հասարակության մեջ: *Արժեքային համակարգի ուսուցման* հսկայական պահուստ կա այս հատվածում: Խորենացին ցավ է ապրում մարդկային առաքինությունների կորստի համար: Նա դատապարտում է ոսկեսերությունը, կեղծավորությունը, ծուլությունը, անձնասիրությունը, ագահությունը, ժլատությունը, տմարդիությունը, սուտը, կաշառակերությունը, անարդարությունը, անհաստատությունը, սիրո և ամոթի բացակայությունը և այլն: Ողբալով ներկան՝ պատմահայրը տագնապում է գալիքի համար: «Եւ ոչ գիտեմ, եթե զիարդ յարմարեցից ողբերգութիւնս, և կամ զով արտասուեցից...զաշխարհս եկեա՞լ աղէտս, եթե զապագայիցն ակնկալութիւն»:[2, 117 էջ]

Այս տագնապը ապագայի համար բխում է մտածողի մեծ ազգասիրության և պետական մտածողության հորիզոնից: Պատմահայրը կրթում է պետական առաքինի մտածող սերունդ, որը տեսնում է ապագան, սովորում է, ինքնամաքրվում, ձգտում հզոր հայրենիք ունենալուն: «Խոշոր անհատականության հայացքների մասին խոսելիս ամենից առաջ պետք է որոշել նրա վերաբերմունքը իր ապրած օրերի ու ժամանակների անցքերի նկատմամբ»: [2, էջ 98]

ԳԼՈՒԽ 2. «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՈՒԺԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Հզոր դաստիարակչական ներուժ ունի մեր ժողովրդական էպոսը՝ *«Սասնա ծռերը»*: Դյուցազներգությունը *արժեքային ըմբռնումների մի «հրաբուխ» է*: Այստեղ ամեն վայրկյան ամեն տողի հետ ընթերցողը կրթվում է, զարգանում, սովորում, հիանում, ապշում, ոգևորվում: Էպոսը ընթերցողին տալիս է գեղեցիկը, ճիշտը տեսնելու բանալի: Վերլուծենք Ծովինարի կերպարը: Նա իր համաձայնությունն է տալիս դառնալ Խալիֆայի կինը՝ միայն թե չզոհվեն հայ պատանիները, հայրենիքը չենթարկվի ավերածության.

-Ես մենակ իմ հոր թերեն,
Ես մեկ ջան եմ, երթամ, կոսվիմ,
Քանց մեր Հայաստան էրկիր ավերի,
Էն հազար-հազար հոգիք կորուսանին:[4, էջ 6]

Աշակերտների հետ հենց նման հատվածների մանրամասն վերլուծությունը, քննարկումը նրանց մեջ սերմանում է արժեհամակարգ, որի հիմքում ամբողջ կյանքում նրանց անհրաժեշտ առաքինություններն են: Մեկ հերոսի արժեհամակարգը չէ, որ դաստիարակչական հրաշալի օրինակ է դառնում աշակերտի համար: Ամբողջ էպոսը առաքինությունների և արժեքների խտացումն է: Օրինակ՝ Ծովինարի որդիները հիացմունքի արժանի դյուցազուններ են, որոնք մարդասիրության, արդարության, ազնվության դաս են տալիս ընթերցողին: Աշակերտները ընթերցում են հետևյալ հատվածը.

«Սանասար ասաց Բաղդասարին.
-Առաջ զմեր բերդ շինենք,
Թե չէ զէդա աղքատ-ուղքուտ տներ:

Բաղդասար պատասխանեց.
-Առաջ շինենք զէդոնց տներ

Ու նոր շինենք զմեր բերդ,
Էդ խեղճ մարդեր չեն կարենա
Արեւուն առջեւը կենա»: [4, էջ 33]

Մարդասիրության փայլուն օրինակ, որը խիստ ակնառու է և դաստիարակչական: Աշակերտներն ուսուցչի հանձնարարությամբ ինքնուրույն գտնում են բազմաթիվ նման օրինակներ և ներծծվում *էպոսի փոխանցած արժեքներով*:

Գրականություն դասավանդելիս «Սասնա ծռեր» էպոսի միջոցով դաստիարակվում է մի սերունդ, որն իր պրիզմայով անցկացնում է ավագների կուտակած գիտելիքներն ու փորձը: Յուրաքանչյուր սերունդ պետք է արժևորի նախորդին, վերցնի նրա տված փորձի և գիտելիքների պաշարը և քայլի առաջ՝ ավելին ձեռք բերելու համար: Սասնա հերոսները հենց նման արժեքների կրողն են: Ուսումնասիրում ենք հետևյալ հատվածը.

«Սանասար ասաց.
-Հա՛յ, պապիկ,
Ծեր ալևոր, մեծ մարդ ես դու,
Աշխարք շատ ման էկեր ես,
Էս տուն մենք նոր ենք շիներ
Դեռ մեր տուն անուն չունի,
Պապիկ ես քեզ բերի էստեղ,
Որ դուանուն դնես մեր բերդին:»[4, էջ 36]

Էպոսում շատ են նման դրվագները, երբ հզոր դյուցազուններին իմաստուն խորհուրդ են տալիս ավագները, բազմափորձ ծերունիները: Նման դրվագները դաստիարակիչ ներգործուն ուժ ունեն: Էպոսը նաև ուսուցանում է բարություն, աշխարհին բարին կամենալու մղում.

«Էն էլ ասաց.
-Որդի , որ կերթաս,
Ինչ որ քեզ ռաստ կը գա
Թե քար, թե թուփ, թե անասուն, թե գազան
Ամենուն էլ բարև տաս:
Առանց բարև տալուն չանցնես»: [4, էջ 54]

Բարի խոսքը հաղթահարում է թե՛ չար, թե՛ խոչընդոտ: Ժամանակակից աշխարհում, երբ մարդիկ օտարանում եմ միմյանց, դառնում անտարբեր, ոչ կարեկից, *խիստ արդիական է դառնում երեխաների մեջ մարդկային այնպիսի հատկանիշների սերմանումը*, ինչպիսին է հյուրասեր, հյուրընկալ, օտար մարդու հանդեպ մարդկային գթասրտությունը, կարեկից լինելը: Էպոսի հետևյալ հատվածը ապշեցնում է ժողովրդական ոգու մաքրությամբ, վեհությամբ.

«Ասին-Կարիբ տղերք ենք, մամի՛կ, հյուր չե՞ս ուզի:

Ասաց-Ինչի՞ չեմ ուզի, որդիք, հյուրն աստծուն է»: [4, էջ 69]

Էպոսը բազմաթիվ դրվագներ ունի, որոնցում իր հերոսների արարքների միջոցով սովորեցնում է լինել մեծահոգի, կարեկից, իսկական ասպետ: Նույնիսկ իմանալով, որ իրենց կյանքը կվտանգվի, Սասնա հերոսներն օգնում են նեղն ընկածներին, ձեռք մեկնում, փրկում շատերին:

Սանասարն ու Բաղդասարը սպանում են ջրի ակունքը փակող վիշապին, որ քաղաքը ջուր ունենա և ջահել աղջիկները կեր չդառնան հրեշին: Մեծ Մհերը սպանում է առյուծին, որը փակել էր Շամից ու Հալեպից եկող հացի ճամփան և փրկում մարդկանց սովից: Ընթերցող աշակերտն այս ազդեցիկ դրվագներով դաստիրարակվում է՝ հաղորդակցվելով մարդկային լավագույն որակների հետ: Մհերը ազնիվ է, չի սիրում սուտը: Քամի Փահլևանի հետ խոսելիս ասում է.

-Իմ տված խոսքը խոսք է,

Թե դուք դև եք,

Մենք էլ Սասնա կտրիճ փահլևան ենք:[4, էջ 105]

Սովորողների ուշադրությունը կենտրոնացնում ենք Սասնա քաջերի նման առաքինությունների վրա:

Կարևորագույն արժեքներից է այն, երբ Սասնա հերոսները պայքարում են հայրենիքի անվտանգության և բարգավաճման համար: Ահա Մեծ Մհերի մասին հատվածը. «Մհեր էնպես կշահեր Սասուն, Որ մարդ կը վախենար Սասնա մոտենա...Սասուն շատ առաջացուց Մհեր»: [4, էջ 114] Սասնա հերոսներն անձնազոհ են: Մհերը և Արմաղանը իրենց կյանքով են հատուցում ժառանգ ունենալու համար:

Սասունցի Դավիթը օգնում է իր տավարարած ընկերներին, սպանում է դևերին և մեծ քանակությամբ ոսկի բերում Սասուն, հարստացնում է իր երկիրը, լիացնում Սասնա ժողովրդին,

մինչդեռ իր համար դների քարայրից ընդամենը մի ձի է վերցնում:[] Մարդկային նման հատկանիշները աշակերտներին օրինակ են դառնում: Սովորեցնում են լինել ազնիվ, մտածել ընկերների, համաքաղաքացիների մասին, սիրել մարդկանց, գործել նրանց համար:

Սասունցի Դավթի *կերպարի միջոցով կարելի է կրթել սովորողներին*, նրանց մեջ հղկել լավագույն մարդկային որակները: Ահա այս հատվածը, երբ Դավիթը գալիս է Ծովասար և տեսնում հոր կողմից բանտված կենդանիներին.

-Վա՜յ, իմ հեր ինչքան մեղք է գործեր՝

Որ էս գազաններ գերի է դարձուցե:[4, էջ 185]

Տղամարդու արժանապատվության, քաջության մասին Դավթի պատկերացումներն ապշեցնում են, դաստիարակում հումանիզմ, ասպետություն, վեհանձնություն, երբ վերլուծում ենք այս հատվածն ամփոփող միտքը.

-Չէ՞ որ էնոնք գերի են, հրողբեր

Մարդ էլ գերին զարկի՞:[4, էջ 185]

Դավիթը ազատ է արձակում Ծովասարում բանտարկված գազաններին՝ ասելով. «Գնացե՛ք, ձեզի համար ապրեք»:

Աշակերտների հետ *շարունակում ենք ուսումնասիրել Դավթի կերպարը*: Պատանի Դավիթը աշխատասեր է, հետաքրքրասեր, նպատակասլաց: Նա որոնող, պրպտող, հարցերի պատասխաններ փնտրող է: Երբեք չի բավարարվում պատասխաններով, այլ իր խելքի, կամքի ուժի շնորհիվ գտնում է սեփական լուծումները, անում ինքնուրույն եզրահանգումներ: Սովորելով ավագներից՝ նա միաժամանակ հետազոտում ու ճանաչում է աշխարհը ինքնուրույն: Դավիթը կառուցում է Մարութա վանքը, նորոգում է կամուրջը, մտածում խեղճ, աղքատ մարդկանց մասին: Սասունցի Դավթի կերպարը մեծ հումանիզմի չափանիշ է: Նա հարգում է արաբ ծերունու խոսքը, լսում նրան և հրաժարվում անմեղ մարդկանց արյունը թափելուց.

-Չէ՞ որ էնոնք էլ մարդ են, իսան են:

Ինչի՞ կը կոտորես, ինչի՞ կը սպանես.

Չէ՞ էդոնք էլ երեխաներ ունեն,

Տուն ու կնիկ ունեն:

Էնոնց սպանես՝ ճժերու մեղք կընկնի քու վիզ: [4, էջ 232]

Դավիթը իր թշնամու հետ մենամարտելիս ցուցաբերում է մեծահոգություն: Նա զիջում է զարկերը՝ չմոռանալով, որ Իսմիլ Խաթունն իրեն մայրություն է արել, իսկ Մելիքի քույրը խնամել է իրեն:

Պետք է ուշադրություն դարձնել նաև այն բանին, որ ինչքան էլ Դավիթը բարի է և մարդասեր, միաժամանակ նա չի հանդուրժում բռնակալներին և երկիր ներխուժած թշնամուն սպառնում է.

-Հանդարտ կացե՛ք,

Մեկ էլ չէլնեք ու գաք վեր Սասնա:

Մեկ էլ, որ զենք առնեք մեր դեմ,

Թե որ դուք կռվի գաք վեր մեզ՝

Քառսուն գազ խոր հորում ըլնեք,

Թե ջաղացի ջոջ քարի տակ,

Տ՛էլնի ձեր դեմ Սասնա Դավիթ

Տ՛էլնի ձեր դեմ Թուր Կեծակին:[4, էջ 206]

Կարևորագույն արժեքներից է նաև ծնողասիրությունը և ծնողին մեծարելը: Երբ Փոքր Միհրը մենամարտում է Դավթի հետ, վերջինս անիծում է իր որդուն, որ Միհրը մնա անժառանգ, այսինքն՝ ծնող չդառնա.

-Միհե՛ր, որ դու հետ ինձի կռիվ արիր,

Ինձնի ամանչեցրիր,

Կանչեր եմ քաղցրիկ Աստված,

Անմահ ըլնիս, անժառանգ: [4, էջ 285]

Էպոսը անընդհատ կրթում է ու հղկում ընթերցողին, բացահայտում իրական արժեքները, սովորեցնում լինել ազնիվ, առաքինի, շիտակ, վեհ, համարձակ: Սասնա հերոսները սովորեցնում են պայքարել հայրենիքի ազատության համար, հայրենիքը դարձնել բարգավաճ ու հարուստ: Էպոսը իր բերած գաղափարներով, իր արժեհամակարգով անփոխարինելի դաստիարակիչ ուժ ունի սերունդների համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սովորողների դաստիարակությունը, նրանց մեջ արժեքային համակարգի ձևավորումը, ժողովրդավարության հատկանիշների կերտումը բարդ, կարևոր և շարունակական աշխատանք է: Սա մարդկային հասարակության ստեղծման օրվանից եղած կարևորագույն խնդիրներից է: Այսօր և միշտ մանկավարժության նպատակներից են դաստիարակել ազնիվ մարդ և քաղաքացի, բազում առաքինություններ կրող գիտակից անձ: Բայց այդ նպատակին հասնելու ճանապարհի մանկավարժն ունի լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ:

Գրականության դասաժամերին ստեղծագործությունների ուսումնասիրման միջոցով աստիճանաբար ձևավորվում է *կայուն արժեհամակարգ*, վերլուծվում են իրավիճակներ, այդ իրավիճակներում կողմնորոշվող հերոսների գնահատելի քայլերը՝ դրանք դարձնելով օրինակելի: Այս ամենը կատարվում է մանկավարժի համառ աշխատանքի, բացահայտումների, հետազոտությունների, վերլուծությունների, ճիշտ մեթոդաբանությունների շնորհիվ:

Առաջարկություններ:

Ելնելով իմ մանկավարժական բազմամյա փորձից՝ կարող եմ առաջարկել.

- Խթանել սովորողների ընթերցասիրությունը՝ օգտագործելով մոտիվացնող, նպատակամղող մեթոդներ(կանխատեսման մեթոդ, սկզբնական հատվածի ընթերցման և այլն)
- Խրախուսել սովորողների ինքնուրույն ցանկացած աշխատանք:
- Արժևորել սովորողի ինքնուրույն վերլուծած թեկուզ մեկ փոքր միտքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 1, «Հայաստան» հր. , Երևան, 1973, 385 էջ:
2. Հր. Թամրազյան, «Հայ քննադատություն. Գիրք Ա. Գրական մտքի ակունքները և ձևավորումը: Հինգերորդ դար: Երևան, 1983, 440 էջ:
3. Մ. Խորենացի , Հայոց պատմություն, Երևան, «Հայաստան» հր., 1990, 321 էջ:
4. «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական հերոսավեպ, «Լույս» հր., 1981, 359 էջ: